48. ԽԵԼՔԸ ՇԱՏ

Հ՝առաջ, ժամանակով մեկ տղա կըլնի, ուրա սովորութենը ինչ ա՝ դընկներ քաղքի մեջ, ձեն տալով կը զըվըռներ.— Խելքս շա՞տ ա, մա՛լ չունիմ։

Գնաց մեկ օր մեկ բազրկյանի պատահավ, ըտոր դյուքնի ըռեջով ձեն տվեց, թե.— Խելքս շատ ա, մալ չունիմ,— անցավ։

Էտ բազրկյանը մտածեց, թե էտ ինչ բան էր, օր էտ տղեն ձեն տվեց՝ «Խելք շատ ունիմ, մալ չունիմ», խանչեց բերեց ուր մոտ։

Ըսեց.— Դու էտ ի՞նչ էր ձեն տվիր։

Թե ասեց.— Ազա, իմ սովորութեն էտմալ ա։

Ասեց.—Արի քեզի մի հարիր մանեթ փարա կիտամ, քեզի մեկ դուքյան կիտամ, տարին օր թըմըմավ, գուզամ քու խելքի շատն ու քիչ դիմնամ։

Բերեց հարիր մանեթ փող տվեց, մեկ թեթև դուքյան տվեց. էտ մարթն ուրին մանրեզեն առավ, ծախեց, բերեց մեկ չաքմաճա շինեց, աշխատանքը թալեց էն չաքմաճի մեջ, էն հարիր մանեթին միշտ ապրանք սլահեց ուր դուքյան, հ՝եվելի աշխատանքը թալեց չաքմաճեն։

Տարին օր թըմըմավ, բազրկյանը էկավ, էկավ նստավ, ասեց.— Խելքի՛ց շատ,— ասեց,— բե տեսնիմ ի՞նչ ա քու աշխատանք։

Ըսեց.— Ես չեմ գինա, չաքմաճեն գինա։

Չաքմաճեն քաշեց բերեց դրեց բազրկյանի հ՝առէջ, հաշվեց, հարիր մանեթին էրկու հարիր մանեթ աշխատանք էր բերե մի տարվա մեջ։

Բաղրկյանն ասեց.— Իմ ջան դուս դա, քեզի պես տղեն իտա կեխտոտ դուքյանի մեջ թողիմ նստի,— վերցուց տարավ դրեց ուր թոփածախս դուքնի հ՚առեջ։ Իմալ րախտոտ էր էտ խելքից շատը, օր բիրադի քաղաքի առուծախսը դարձավ ուրան վրեն։ Բաղրկյանը շատ սիրեց խելքից շատին։ Բաղրկյանին մեկ հատ ախչիկ ուներ՝ լսի կտոր էր, վաղյրի տղեն էլ մարդ կճամփեր առնելու, վաքիլի տղեն էլ մարդ կճամփեր, բիրադի էտ քաղաքի մեծամեծներու տղեքներ դուզին էտ ախչիկը առնելու։ Մեկ օր բաղրկյանն էկավ։ խելքից շատին ըսեց.— Դու էլ մեկ մարդ քըզի համար հ՚ուզընկան ճամփա, ես իմ ախչիկ քըզի կիտամ։

Ասեց.— Աղա՛, կէղնի՞ օր ես համարձակվիմ, էտ բանին տեր էղնիմ։

Ըսեց.— Ախչիկն իմն ա, ես քեզի կըսեմ, օր մարդ ճամփա։

Ըսեց.— Օր դու կըսիս, ես էլ կճամփեմ։

Հ՚ելավ ուր հավատարիմ ախպեր տղեքներուց մեկը ճամփեց։ Գնաց տեսավ, օր վազիրի մարդն էկեր էր, վաքիլի մարդն էլ էկեր էր, նստեր էր, մենծ-մենծ բաղըկյաններու տղեկներ էկած են, նըստած են։ էտ մարդն էլ գնաց նստավ։ Հարցուցին, թե դու վի՞ր համար ես էկի։

Ըսեց.— Ես էլ էտ բաղրկյանի պրիկաշչիկ խելքից շատի համար իմ էկի։— Ծիծղացին ու ծափ զարկեցին։

Բաղրկյանն ասեց.— Ես չըմ կարնա ըսե յա՛ ընդոր տղին կիտամ, յա՛ ընդոր. բիրադի էլ ընծի համար մեկ եք։ Իրիկուն ամեն մարդ ուր նշան բերա, ախչիկ որի նշան որ վերցուց, ընտրան կիտամ, դուք հ՚իրար հետ ուտել խմել, քեֆ ուրախութեն էրեք։— էտ մարդեր հ՚ելան գնացին, ամեն մարդ ուրան դյորա նշան պատրաստեց։

Բաղրկյան խելքից շատին ասեց.— Չէլնի թե ծախսի տակ ընկնես, մեկ մատանիք, մեկ հատ շալ կդնիս բոթնոցի մեջ կը ճամփես։

Իրկուն անմեկ մարդ առավ ուր նշան էկավ։ Բերեցին բիրադի ջեռկով դրեցին։ Բացեցին օր նազիրի տղեն միլիոնաչափ նշան ա ճամփե, վազիրի տղեն էլ ընտոր պես, բիրադի էտ հարուստներ մեկ մեկից հ՚ավել նշան ա պատրաստած բերած։ խելքից շատի նշան բացեցին, տեսան, օր մեկ թեթև մատանի կա, մեկ մանեթ կիսու էլ շալ ա։ էլի տնազ առան ու ծիծղացին թե՝ «Տեսե՛ք, մեկ մատանիով ու մեկ շալով էկեր ա մեր հետ նշան կը դնա»։

Խանչեցին ախչկան բերեցին։

Ըսին.— Էսի ֆիլանի, էսի ֆստանի նշանն ա, ո՛ր մեկ կը վերցուս՝ վերու։

Ախչիկը էկավ խելքից շատի մատանիք վերցուց, պաքեց, էցկեց մատը, շալն թալեց գլխուն, թողեց գնաց։ Էտոնք բիրադի ըռըկան[1] թե դու տես օր, իտա ղդար մարդու նշան չվերցուց, գնաց մեկ պրիկաշչիկի կեղտոտ մատնիք վերուց։

Բայրկյանն ըսեց.— Նստեք կեր ու խում էնինք, քեֆ էնինք։

Էտոնք ըսին թե մենք քու հացը չենք ուտի։

Ըսեց.— Շատ հարկավորս չէ, թողե՛ք գացեք։

Թողին գացին։

Մե տասն օրից ետ բաղրկյաններ քոման էկան էտ բաղրկյանի մոտ, քառսուն բաղրկյանի գլխավորը էտ էր։

Ասեցին.— Բաղրկյա՛ն, մենք օր չէրթանք քաղքներ խրիտ էնելու, մեր էրեխաներ չենք կրնա պահե, ժամանակը էկեր է օր պըտի էրթանք։

Բաղրկյանն ըսեց.— Դուք գինաք օր ես ձեզի հերուքեն եմ էրի, դուք բիրադի խամ տղա եք էղի, ես եմ սովրցուցե բիրադի, ես մկա ծերացեր եմ, մուննաթ կէնիմ օր իմ տղեն ղու պրտի տանեք, պարզ հ'երես տանեք, պարզ հ'երես բերեք։

Բաղրկյաններն ըսեցին.— Մեր հեր դու ես, դու օր մուննաթ կէնիս, պրտի տանենք ու բերենք։

— Դե,— ըսեց,—գացե՛ք, հ'ամեկ մարդ իր կարողուքենի գյորա պատրաստուքեն տեսնի ֆլան ամսու ֆլան օրը դուս գա։

Բաղրկյան քառսուն բեռ ապրանք բռնեց, հեծավ ուր ձին, ընկավ բեռներու հ'առջ, բերեց քաղքից դուս հանեց։ Էկան քառսուն բաղրկյան դումարացան մեկ տեղ եռսուն ինը բաղրկյանից մուննաթ էրեց, ըսեց.— Իմ տղեն ձեզի ամանաթ կիտամ, իմալ օր ես ձեզի կտանինք կբերինք, դու էլ իմ տղեն տարեք բերեք։

Ըսեցին.— Մեր աչքի՝ վրա, քու լավուքեն մեր վրա շատ ա, էտ քու տված հացն ա օր մենք կուտենք։

Բարև մնա էղան իրարուց, բաղրկյան դարձավ քաղաք, ընտոնք ընկան ճամփախ գացին։ Գացին հասան ուրանց յուրտատեղն, օր պրտի դիշեր մընեն, ջոկ ջոկ ուրանց բեռներ թափեցին, եռսուն ինը բաղրկյան իրարու հետ մասլահաթ էրեցին, թե բերեք ամեն գիշեր մեկ բեռ դողնանք, քառսուն օր ճամբախ կէրթանք, քառսուն բեռ ապրանք ունի, չուրի հասնինք տեղ՝ օրը մեկ բեռ գողնալով՝ ապրանքը կը վերջացունք, հրմալ էնինք օր էտի մեկ էլ ոտք քաղաք

1 Խռովեցին (Ս. Բ.)։

չթալա, բազրկյանի երես չելնի, ճամփեցին մեկ բեռ ապրանք գողցան։ Հ՚ելան բիրադի բեռներ բառցան, էտ էլ ուր ծառաներուն ըսեց. «Բառցե՛ք»։ Եռսուն ինները բեռ բարձան, էն մեկ ղաթիր բերեցին, բեռ չկար։

Էկան ասին, թե ա՛ղա, ղաթիր կա, բեռ չկա։

— Որ հըմալ է, իմ բեռներ թափեք։ Բեռներ թափեց։

Բազրկյաններն ըսին.— Բառձի, ինչի՞ թափեցիր։

Ասեց.— Գացե՛ք, աստված ձեզ հետ էղնի։

Ընտոնք օր հեռեցան, բեռներ տվեց բառնալ, շիտկեց ղըռով գնաց։ Ասեց. «Ես էտոնց էրթած ճամփով չեմ էրթա»։

Հինգ օր կամ տասն օր գնաց, գնաց հասավ մեկ էրկիր, տեսավ հըմալ սով էր ընկե, օր անոթութենե ծովու ձկներն էլ կը լկլկին։ Գնաց մե քաղաք, հարցուց, թե. «Ձեր քաղաք ամբարդար կա՞»։

Ասեցին թե.— Կա՛։

Գնաց ամբարդարի հետ խոսաց, թե. «Ի՛նչ ղըգըր ցորեն ունիս»։

Ըսեց.— Ինչ ղըգըր հ՚ուզիս՝ ունիմ։ Օրը հինգ խալվար առավ, տվեց փռեր թխել, չորս խալվար ցրվեց քաղաքացուն, մեկ խալվարն էլ բրդեց, թափեց ծով։ Քառսուն օր պահեց ծովու ձկներն էլ, քաղաքացին էլ։ Քառսուն օրից հետ էտոր կարողութեն պրծավ, իմալ էղավ, օր նոքարները հաց կուզին, հաց ձեռ չէր ընկնի։

Ձկներ գացին ուրենց թագավորին ըսեցին, թե.— Մեկ բարելի հողածին է էկե, քառսուն օր քու հրռեաթը պահեց, էն մարդը օր չէղներ, քու հրռեաթ բիրադի կը ջարդվեր։

Թագավոր մեկ քող տվեց, ասեց.— Գացե՛ք էն հողածին բերեք իմ մոտ։

Իրեք ձուկ էկան ասեցին.— Աղա՛, մեր թագավոր քեզի կը խանչա։

Ըսեց.— Ախր դու ձուկ իք ծովի մեջ, ես իսան իմ՝ կը խեղդվիմ։

Էն քողը տվեցին, ըսեցին.—Առ էտի էծկա գլոխդ, էլ չը խեղդըվիս, մենք քեզի կըտանինք։

Քողն էծկեցին գլոխ, հ՚ելավ նստավ ձկներու մեջքին, տարան։ Ճամփախ ըսեցին թե.— Ա՛ղա, դու էտ լավութեն էրիր ես, մենք թագավորին ըսիր ինք, թագավոր քեզի բախշիշ կիտա, իրեք անգամ օր իլղար կառնիս թագավորի բերնեն, մեկ սուփրա ունի, էնի գուզիս։ Էնի թագավոր ա, ուր խոսքից հետ չի դառնա, կիտա։

Առան, գացին թագավորի մոտ։ Էտ մարդը գնաց թագավորին գլոխ տվեց, թագավոր տեղ տվեց նստավ, ասեց.— Հողածի՛ն, էն լավութեն օր դու ես էրի,— ասեց,— հ՚ուզա տամ։

Ասեց.— Քու սաղութեն դուղեմ։

Մեկ էլ ասեց.— Հ'ուզա տամ։

Իրեք անդամ իլղար առավ թագավորի բերնեն։ Ասեց.— Մեկ սուֆրա ունիս, էն սուֆրեն տուր։

Ասեց.— Քու սովրցընողի վիղը կոտրի։

Ասեց.— Խոսքս գացեր ա, բերեք տվեք։— Բերին տվին, շնորհակալութեն արավ թագավորից, էտ ձկներ բերեցին, էլի դուս հանին։

Ձկներ օր դարձան մասլահաթ էրին, թե՝ «Թագավորը էն մարդու հաց չէր կերի, էտ զդար բաշխիշ տվեց, հ'ըպա մենք ինչ պըտի էնինք, օր քառսուն օր մեղի պահեց, պահպանեց»։ Ձկներուն ըսեցին, ընկան ծովու մեջ։ Ինչքան անգին քարեր կար ծովի մեջ, ժողվեցին բերին ծովու ղրաղ քոմեցին[1]։ Լուսն օր բացվավ, խելքից շատը հ'ելավ տեսավ, ասեց ուր ծառաներուն ձիու փեյինները շաղեցին, ամեկու մեջ վեց հատ կամ ութը հատ դրեց ու քյարփինշ թափեց։ Եռսուն ութ բեռը ըտրնե բռնեց, մեկ բեռն էլ խամ աթար բռնեց։ Բեռներն օր բռնեց, պրծավ, էկավ էրկու քաղաքացոց շնորհակալութեն առավ, քաղաքացիկ էլ էն մարդից շնորհակալութեն առան, ու էկան ճամբախ»։ Էկավ հունվար ամսու մեկ օր բեռները թափեց էն տեղը, օր բեռը կորեր էր։ Քիչ մնաց, տեսավ մեկ բաղրկյան էլ էկավ, չուրի մութն առավ, քառասուն բազրկյանն էլ էկան ժողովվան մեկ տեղ։

Հունվարի ժամանակն էր, ձմեռ տվեց վրեները, սաստիկ բուքն ու ցուրտը, ուր ծառաներին ասեց.— Խամ աթարներից մեկ բեռ բերեք վառեք, տաքցեք։

Օր վառեցին, կրակը բանցրցավ, տեսան մեկել բաղրկյանները ուրանց ծառաներուց էրկուսը ճամբեցին, թե.— Գնացեք տեսեք էտ ի՞նչ վառելիք ունին, օր էտպես գյուռ կը վառին։

Էկան հարցուցին։ Ըսին, թե.— Մեր բեռներ բիրադի աթար ա։— Ջհավատացին։

Ըսեցին.— Էկեք տեսեք։— Էկան տեսան օր բիրադի աթար էր։ Գացին ուրանց բաղրկյաններին ասին, թե՝ «Էտոր քառսուն բեռն էլ աթար ա»։

Ըսեցին.— Գացեք մեկ բեռ բերեք վառենք։ Էրթանք քաղաք էրկու բեռ տանք։

---

1 Կիտել (Ծ. Բ.)։

Էկան ըսին.— Մեր բազրկյաններ կասեն, մեկ բեռ թող տա վառինք, էրթանք քաղաք, էրկու բեռ տանք։

Էն էլ ասեց.— Գացեք ձեր բազրկյաններուն ասեք, էրկու բեռ չենք ուզե, ինչ աթար տամ, էն աթարից տան, միայն դացեք պայմանը գրեք բերեք։ Հաստատ պայմանը գրեցին, փեչատները զարկեցին։

Խելքից շատը ուր ծառաներաց ասեց.— Մի բառնեք, թող ընտոնք հ'առեջ էրթան, ընտոնք օր բառձան, դացին հ'առեջ, նոր խելքից շատը ուր բեռներ բառնալ տվեց։ Ընտոնք օր գացին, բազրկյան բաշին հեծավ ձին, էկավ հ'առեջներ, տեսավ օր եռսունինները բազրկյանն կեն, ուր տղեն չկեր։

Հարցուց ասեց.—Ո՞ւր ա մեր տղեն, չկա։

Ասեց.— Ընդուր անունն էլ դու կիտա՞ս հըլա։

— Թե ընչի՞։

Ըսեցին.— Քառսուն բեռ աթար ա բերի։

Ըսեց.— Էտմալ բան կէղնի՞, աթար ընչի՞ պըտի բերա։

Ասեց.— Մեկ բեռն էլ մենք առեր ենք, վառեր ենք, օր էրկու բեռ պըտի տանք։

Բաղրկյան բաշին ետ դարձավ ուր տուն, մեկ նամակ գրեց, տվեց ծառայի ձեռ, ասեց.— Էնտոր բերած ապրանք ընձի հարկավոր չէ, օր քաղաք մտեր ա, գլոխ կիտամ զարկել։

Ծառան նամակը բերեց տվեց խելքից շատին։

Նամակն օր առավ կարդաց, ասեց.— Գնա՛ բաղրկյան բաշուն ասա, մեկ տեղ տա գիշերս սրթըրվիմ, լուսուն գելնիմ, քանի օր ընտոր անուն կա, կէրթամ, չըմ մնա քաղաք։

Ծառան էկավ, ասեց.— Թող էրթա ֆիլան ղազանոց սրթըրվի։

Ծառեն գնաց ասեց թե՝ «Թող էրթա ֆիլան ղազանոց սթրվի»։ Քաշեց ուր բեռները բերեց լցեց ղազանոցի մեկ կողմը, ղաթըրները կապեց, ժողվան ուր ծառաներով, սուֆրեն բացեց, կերան, խմեցին ու քեֆ էրեցին ուրենց համար։ Բաղրկյան բաշու աղջիկ շատ դեմ ունկավ մորն, ըսեց.—Մե էրկու հաց տուր տանիմ տամ խելքից շատին, ճամփուց է էկե, անոթի կէղնի, մեկ էլ երեսը տեսնիմ, ես դիտամ, բաղրկյան բաշին էլ չը թողա օր քաղաք տենի, իրարու երես տեսնինք։

Մերը բերեց էրկու հաց տվեց ախչկան, ախչիկ չարսաբը քաշեց ելխուն, գնաց, գնաց հասավ ղազանոցի մոտը, տեսավ օր շատ զարմանալի լուս կերևեր ղազանոցից։ Գնաց փանշարից իշկեց, տեսավ խելքից շատ մեկ սուֆրա ա փռե, օր մեկ ստաքանի արծողու-

թեն արժենա ուր հոր կարողութեն, բիրադի անգին քարից, չամ՝ չրաղից, ակունքներուց։

Ախչիկ դարձավ էկավ ուր հոր տուն, մորն ըսեց.— Ես գինամ որ իմ խելքից շատ էն տղեքներուց չէ, մեկ սուֆրա է փռե, որ մեկ ստաքան, մեկ չայի տակ աժի իմ հոր կարողութեն։

Մերն էլ գնաց բագրկյան բաշուն ասեց, թե.— Խելքից շատ մի էնպեսի սուֆրա ա բերե։

Բաղրկյան բաշին հ՚ելավ գնաց, գնաց փանշարից իշկեց, որ ախչկա խոսք օղորթ ա։ Ձեն տվեց, թե·— Էկեք դուռը բացեք։

Հելան դուռը բացեցին, բաղրկյան բաշին ներս էկավ, խելքից շատը հ՚ելավ տեղից կայնավ, քաշեց տեղը նստըցուց։ Բաղրկյան բաշին որ տեսավ էս սուֆրի կարողութեն, խելքը գլխուց գնաց։

Ըսեց.—Չէ՛, թե որ կթողուս էն մեծ օթախի մեջ դնիմ, կիգամ, թե չէ[1] չըմ հ՚իգա։

Ըսեց.—Լա՛վ, հ՚ելի գիշեր բարձի էրթանք, մարդ չտեսնի մեզի։

— Չէ,—ըսեց,—արևը պըտի էրկու բոյ էլնի, նոր բառնամ գամ։ Բաղրկյան բաշին հ՚ելավ, առավ սուֆրեն գնաց։ Լուսն որ բացվավ, արեն սռավ, մեր խելքից շատ բարձավ բեռներն ու գնաց։ Բաղըրկյանները հ՚ըմմեն տեղ ասացին, թե աթար ա բերի։ Սաղ քաղքըցիք ժողվան էկան, հա՛ էրեցին, հո՛ւռա էրեցին, ծիծղացին։ Քշեց բեռները, բերեց բաղրկյան բաշու դուռը թափեց։

Բաղրկյանն ըսեց.—Որդի՛, թող ծառաները տեղավորին, դու քրտնած ես, ներս արի։

— Չէ,—ասեց,—չէղած բան ա։ Քանի որ իմ մեկ բեռը դուս ա, ես նես պըտի չիգամ։—Քաշեց բիրադի բեռները, էն լավ օթախի մեջ, նոր էկավ, բաղրկյան բաշու մոտ նստավ։

Էրկու օրից ետ բաղրկյան բաշին խելքից շատին ասեց.—Բաղըրկյաններ էսօր կէրթան թագավորին տեսութեն, ես էլ կէրթամ, դու էլ կէրթաս դուքյանից լավ ճոթեր կդնես բոթնոցի մեջ, ծածկոց կը քաշես վրեն, կը բերես։

Բաղրկյան բաշին որ գնաց, խելքից շատը հ՚ելավ չորս հատ աթար որեց բոթնոցի մեջ, խաս ծածկոց քաշեց վրեն, բերեց տեսավ, որ եռեսուն իննը բաղրկյանի ընծեն էլ էկեր էր, բերեց բիրադնից վերև դրեց։ Թագավորը իրավունք տվեց բանալու։ Բացեցին էտոր ընծեն որ աթար էր դրած մեջը՝ թագավորը հերսոտավ։

---

[1] Բնագրում չկա՝ չէ (Ս. Կ.)։

Ըսեց.—Ընձի ի՞նչ համարեցիր, օր էտ աթարը բերեցիր, թե հայվան կը համարեր՝ խոտ դարման բերեր։

Խելքից շատ խնդրվավ, ըսեց.— Իրավունք տուր ջարդեմ էս աթարները։

Իրավունք տվեց թագավորը, ջարդեց աթարները, ամեկու մեջեն չորս հատ անգին քար հանեց, սրբից, դրեց վար։ Թագավորի գլոխը ուռավ, փափախը գլխուց ընկավ թե.—Ես թագավոր իմ, էտ մեկ քարի կարողութեն չունիմ, էս-մալ էլ հարստութեն կէղնի՞, օր էտ ղդար ընծա բերեց ընձի։ Բաղրկյանները օր էտ քարերը տեսան, մութները ճղավ, արուն թափավ։ Խելքից շատը հանեց պայման տվեց թագավորին, թագավորը կարդաց, օր եռեսուն իննը բաղրկյան պայման են դրե՝ «Ինչ աթար առնինք, էն աթարից տանք»։ Մեկ բեռ էտ աթարից տվեր եմ, տարած վառած են։

Թագավորն ըսեց բաղրկյաններուն.—Ի՞նչ կասիք, ի՞նչ պըտի տաք էտոր աթարներուն դեմ։

Բաղրկյաններուն լեզուն բռնվավ, ըսեցին.—Թագավոր, խիղճ մացեր ա ուրին՝ մեր կնիկ էրեխեք էլ տանք, չընք աղատվի էտոր ձեռնիցը։

Արի տես, օր բաղրկյան բաշին քիչ ա մացե օր խելքը թռու. կայներ ա կասա՝ «Անպատճառ պըտի առնիմ ու առնիմ»։

Խելքից շատը տեսավ օր բաղրկյան բաշին շատ բանից հ՝ելավ, խանչեց դուս հանեց, ասեց.—Բաղրկյան բաշի, մի՛ շատ բարկանա, էտ աթարից չեմ տվե, խամ աթար եմ տվե։

Բաղրկյան բաշին ըսեց.—Բա ի՞նչ էնինք։

Ըսեց.—Օր շատ ոտքդ ձեռքդ գըյնին, բախշա, խամ աթար իմ տվե։

Թագավոր, վազիր նազիրով ընկան մեջ բարիշութեն էցկեցին մեջներ, շատ օր ոտ ընկան, բաղրկյան բաշին բաշխեց։ Պայմանը տվեցին ճղեցին։ Թագավորից շնորհակալութեն առան ու բիրադի հ՝ելան գնացին։

Բաղրկյան բաշին էկավ ու հարսնքի թատարուք էրեց։ Հարսնիք բռնեցին, յոթն օր յոթը գիշեր հարսնիք էրեցին. էն հասավ ուր մուրազին, դուն էլ հասնիս քու մուրազին։

Աստծուց իրեք խնձոր իջավ, մեկը ըսողին, մեկ լսողին, մեկն անկաջ էնողին։